ՍԵՎԱԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱՄՐՑԱՆԱԿ

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը (ՀՖԿՍՊԻ) և «Հայ Ձմեռ պապ» բարեգործական հիմնադրամը հայտարարում են երախտագիտության և հարգանքի «ՈՍԿԻ ՍԵՐՄԵՐ» կրթամրցանակային ծրագրի 4-րդ մեկնարկը: Այն նվիրված է Արցախյան 44-օրյա պատերազմի հերոս, ինստիտուտի շրջանավարտ Սևակ Մնացականյանի խնկելի հիշատակին:

Չափորոշիչները

Մրցանակը նախատեսում է տարեկան 300,000 (երեք հարյուր հազար) դրամի չափով աջակցություն տրամադրել ՀՖԿՍՊԻ այն ուսանողին/մագիստրոսին/ասպիրանտին (սկսած բակալավրիատի 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակից), որի տվյալները կհամապատասխանեն հետևյալ չափորոշիչներին (բոլորին կամ գերակշիռ մասին).

- առաջադիմություն,
- գիտական ակտիվություն,
- մարզական հաջողություններ,
- Սևակի հայրենատիրության ճանաչում, համախոհություն,
- քաղաքացիական հանձնառություն /կամավորական աշխատանք, հասարակական ակտիվություն/,
- այլ:

Մրցույթին մասնակցելու կարգը

2025 թ սեպտեմբերի 25–ից մինչև հոկտեմբերի 15–ը astghik.martirosyan@sportedu.am էլ. հասցեով ուղարկել հավակնորդի

- CV-ն,
- մոտիվացիոն նամակը,
- մասնագիտական հաջողությունները վկայող նյութերը:

Կրթամրցանակակրի ընտրության պատշաճ ընթացքը կկազմակերպի հանձնաժողովը, որը բաղկացած է ՀՖԿՍՊԻ–ի դասախոսական կազմի, փորձագետների, Սևակի ընտանիքի, բարերարների և «Հայ Ձմեռ պապ» հիմնադրամի ներկայացուցիչներից: Ընթացակարգի մասին պատկերացում կազմելու համար՝ նախորդ երկու մրցույթների լուսաբանումները՝
https://www.facebook.com/events/396490892994845
https://www.youtube.com/watch?v=6Gq31Wwa4nE

Կրթամրցանակի հովանավորը ամերիկահայ բարերար Իռեն Ծատուրյանն է.
«Մեզ թաղեցին, բայց չգիտեին, որ մենք սերմեր ենք»:
Ոսկի սերմերից ոսկի ծիլեր դուրս կգան: